

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 18/3

26 հուլիսի 2016թ.

Քննարկվեց Ա/Ձ Վարիչկա Գրիգորյանի գանգատը ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 03.06.2016թ. թիվ 321359/10 որոշման դեմ:

Ա/Ձ Վարիչկա Գրիգորյանի գանգատում բերված փաստարկները.

Վարիչկա Գրիգորյանը հայտնում է, որ 2016 թվականի մարտ ամսվա հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացվող դրամական հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը ուշացումով ներկայացնելու համար ենթարկվել է վարչական պատասխանատվության 20.000 դրամի չափով:

Հանդիսանալով թոշակառու և հաշվի առնելով իր ծավալած գործունեության, այն է՝ տարեկան ընդամենը մեկ միլիոն դրամի շրջանառությունը, ինչպես նաև մարզում գոյություն ունեցող սոցիալական վատ պայմանները գանգատաբերը խնդրում է որոշումը կայացնելիս հաշվի առնել նշված հանգամանքները:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետը, քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը և ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ 25.05.2016թ. թիվ 555 արձանագրությունը պարզել է, որ Ա/Ձ Վարիչկա Գրիգորյանը սահմանված ժամկետում չի ներկայացրել 2016թ. մարտ ամսվա հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացվող դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի կողմից 03.06.2016թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 321359/10 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որով Ա/Ձ Վարիչկա Գրիգորյանը ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամի չափով:

Տվյալ դեպքում Ա/Ձ Վարիչկա Գրիգորյանի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացրել 2016թ. մարտ ամսվա հսկիչ-դրամարկղային մեքենայով իրականացվող դրամական հաշվարկների հանրագումարի վերաբերյալ տեղեկությունը, այսինքն՝ թույլ է տրվել զանցանք, որի համար Որոշմամբ կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվությունը:

Ինչ վերաբերվում է այն հանգամանքին, որ Որոշմամբ կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված պատասխանատվության առավելագույն չափը, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել հետևյալը.

Քննարկվող դեպքում Ա/Ձ Վարիչկա Գրիգորյանի կողմից խախտվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի դրույթները, որի համար նախատեսված է պատասխանատվություն՝ 10.000 դրամից մինչև 20.000 դրամը:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 244.2-րդ հոդվածի համաձայն հարկային մարմինները քննում են սույն օրենսգրքի համապատասխան հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում:

Հարկային մարմինների անունից վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելու և վարչական տույժեր նշանակելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության վերադաս հարկային մարմնի վարչությունների պետերը և հարկային մարմնի հարկային (տարածքային) տեսչության պետերը:

Այսպիսով օրենսդիրը իրավակիրառողին իրավասություն է վերապահել համապատասխան որոշում կայացնելիս գնահատել գործի փաստական հանգամանքները և ինքնուրույն որոշել տուգանքի չափը:

Վերոգրյալից հետևում է, որ տուգանքի չափը որոշելու իրավունքը վերապահված է բացառապես իրավակիրառողին, որը տվյալ դեպքում, օգտվելով իրեն վերապահված իրավունքից, ինչպես նաև գնահատելով գործում առկա փաստական հանգամանքները կայացրել է համապատասխան որոշում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի իրավաբանական վարչության պետի 03.06.2016թ. թիվ 321359/10 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ